Արձանագրություն N 11

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 16-ի

Օրակարգ

1. **Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականին նախատեսված միջոցառումների և դրանց ուղղված աշխատանքների ընթացքի մասին**

/ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***Ա.Թանաշյան*** /

2. **«Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը» հաստատելու և «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի» իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 08.05.2015 թվականի թիվ N1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.05.2015 թվականի թիվ N75-Ա/1 համատեղ հրամանի և դրա շրջանակներում նախատեսվող աշխատանքների մասին**

/ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ ***Գ.Ավագյան***/

3. **<<Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի>> ծրագրի ընթացքի մասին**

/<<Մարդկային զարգացման միջազգային կենտրոն>> վերլուծական կենտրոնի փորձագետ ***Վ.Ասատրյան***/

4. **Ելույթներ, մտքերի փոխանակում**

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ ***(հանձնաժողովի նախագահ)***
Գ. Հայրապետյան	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր ներկայացուցիչ
Ն. Դուրյան	ՀՀ ոստիկանության ՔՀԳՎ 3-րդ վարչության պետ
Գ.Ավագյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ
Մ. Աղաջանյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության գլխավոր մասնագետ
Գ. Աբրահամյան	ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության աղետների ռիսկի գնահատման և կառավարման բաժնի պետ
Վ. Ասատրյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ
Ա. Գալստյան	«Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» վերլուծական կենտրոնի տնօրեն
Գ.Արմաղանովա	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ ***(հանձնաժողովի քարտուղար)***

Սույն թվականի հունիսի 16-ին տեղի ունեցած Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ Ֆ. Բերիկյանը, ներկայացրեց օրակարգը և խոսքը փոխանցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա.Թանաշյանին՝ **օրակարգի առաջին հարցը** ներկայացնելու համար: Ա.Թանաշյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց 2015 թվականին նախատեսված աշխատանքները և դրանց ընթացքը, մասնավորապես, անդրադարձավ ՀՀ

կառավարության 2015 թվականի մարտի 26-ի նիստում N13 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած <<Սեռի հատկանիշով բռնության կանխարգելման 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրով>> և <<Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության 2015 թվականի միջոցառումների տարեկան ծրագրով>> նախատեսված միջոցառումներին, <<Սոցիալական աջակցության մասին>> ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերին: Ա.Թանաշյանը կարևորեց մի քանի միջոցառումներ. հանրապետությունում գենդերային քաղաքականության շարունակականությունն ապահովելու նպատակով ՄԱԿ-ի աջակցությամբ իրականացվող <<Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների առկա իրավիճակի վերաբերյալ>> ուսումնասիրությունը և ապագա ռազմավարության համար հիմնական ուղղությունների մշակումը, ՀՀ մարզպետարանների համար կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների իրավիճակային գնահատման մեթոդաբանության և «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց ուղղորդման ուղեցույցի» մշակումը, որոնք արդեն ընթացքի մեջ են: Նա տեղեկացրեց նաև, որ մշակվել և առաջիկայում սահմանված կարգով շրջանառության մեջ կդրվեն «Կացարանով ապահովելու մասին կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և «Ընտանեկան բռնության ենթարկված անձանց նախնական նույնացման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի նախագիծը, որոնք կտեղադրվեն նաև նախարարության էլեկտրոնային կայքէջում: Ա.Թանաշյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նաև կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված 2015թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից մեկնարկած <<Աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ապահովման հետ կապված իրավիճակի ուսումնասիրությունը>>, որի արդյունքները հնարավորություն կտան մշակելու սոցիալ-տնտեսական ոլորտի կառուցվածքային վերափոխումների հետ կապված՝ կանանց մրցունակությունը բարձրացնելու, մասնագիտական խտրականությունը նվազեցնելու գործընթացում ի հայտ եկած խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ:

Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի մոր և մանկան առողջության պահպանման մայրական և վերարտադրողական առողջության պահպանման բաժնի պետ Գ.Ավագյանը: Նա ներկայացրեց աշխատանքային խմբի կողմից մշակված և ՀՀ առողջապահության նախարարի 08.05.2015 թվականի թիվ N1129-Ա և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.05.2015 թվականի թիվ N75-Ա/1 համատեղ հրամանը «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագիրը» հաստատելու և «Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների կանխարգելման ծրագրի» իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու մասին»: Գ.Ավագյանը ներկայացրեց վերոհիշյալ ծրագրով 2015 թվականին նախատեսված միջոցառումների ընթացքը, մասնավորապես տեղեկացրեց, որ մշակվել է ծննդօգնության նախածննդյան և հիվանդանոցային ծառայություններ մատուցող հաստատություններում հղիներին նախածննդյան խորհրդատվություն տրամադրող, սոնոգրաֆիկ հետազոտություն և հղիության արհեստական ընդհատում

իրականացնող բուժաշխատողների վերապատրաստման ձեռնարկը և առաջիկայում կմեկնարկի շուրջ 100 բուժաշխատողների վերապատրաստման դասընթացը: Գ.Ավագյանը տեղեկացրեց նաև, որ ընթացքի մեջ է օրենսդրության վերանայման գործընթացը և մինչև տարվա վերջ կմշակվեն համապատասխան առաջարկներ, ինչպես նաև հույս հայտնեց ՀՀ պետական բյուջեով կանանց վերարտադրողական վարքագծի, հղիության արհեստական ընդհատումների, այդ թվում պտղի սեռով պայմանավորված, տարածվածության և առանձնահատկությունների բացահայտմանն ուղղված հետազոտության իրականացման հնարավորության մասին:

Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ ելույթ ունեցավ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» վերլուծական կենտրոնի փորձագետ պարոն Վ.Ասատրյանը: Նա հանձնաժողովին ներկայացրեց 2015 թվականի մայիսին մեկնարկած Եվրոպական Միության ֆինանսավորմամբ Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, «Փրկեք երեխաներին» կազմակերպության, Արմավիրի զարգացման կենտրոնի և «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» հասարակական կազմակերպության համատեղ իրականացվող «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքարի» ծրագիրը: Նա նշեց, որ երկամյա ծրագիրն ուղղված է հայաստանցիների շրջանում խնդրի վերաբերյալ գիտելիքների, վերաբերմունքի և ընկալումների դրական փոփոխություններին, ինչպես նաև սեռով պայմանավորված աբորտների առնվազն 10 տոկոսով կրճատմանը:

Վերոնշյալ արդյունքներին հասնելու համար ՄԶՄԿ-ն և գործընկեր կառույցները նախատեսում են փոխկապակցված գործողություններ և միջոցառումներ իրականացնել երեք հիմնական ուղղություններով:

Մասնավորապես՝

1. Նախատեսվում է ապահովել պետական կառավարման մարմինների մարզային կառույցներին, ՏԻՄ-երին, քաղաքացիական հասարակության տեղական կազմակերպություններին, համայնքային գործիչներին անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով, ինչպես նաև երեխայի սեռի կանխակալ ընտրության բացասական հետևանքների ամբողջական ընկալմամբ:
2. Նախատեսվում է երեխայի սեռի կանխակալ ընտրության հանդեպ բնակչության շրջանում ձևավորել համապատասխան ընկալումներ և վերաբերմունք:
3. Նախատեսվում է աջակցել երեխայի սեռի կանխակալ ընտրության կանխարգելմանն ուղղված քաղաքականության շրջանակների զարգացմանը:

Ծրագրի միջոցառումները, մասնավորապես ներառում են քաղաքականության վերլուծության և խորհրդատվության, հետազոտությունների, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, ուսուցման և վերապատրաստման, իրազեկության բարձրացման և շահերի պաշտպանության մի շարք գործողություններ:

Վ.Ասատրյանը ներկայացրեց նաև ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները, կարևորելով «Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի» հետ ծրագրի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի և ՀՀ առողջապահության նախարարությունների հետ կնքվելիք եռակողմ հուշագրի և ծրագրի շրջանակներում նախատեսված խորհրդատվական հանձնաժողովի ստեղծման հետ կապված միջոցառումները:

Հանձնաժողովի անդամները հանդես եկան կարծիքներով և մեկնաբանություններով՝ կարևորելով վերոնշյալ ծրագրի շրջանակներում նախատեսվող միջոցառումները:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Օրակարգի առաջին հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Ա.Թանաշյանի հաղորդումը:
2. Օրակարգի երկրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Գ.Ավագյանի հաղորդումը:
3. Օրակարգի երրորդ հարցի կապակցությամբ՝ ի գիտություն ընդունել Վ.Ասատրյանի հաղորդումը:
4. Օրակարգի երեք հարցերի, մասնավորապես, իրականացվող ծրագրերի ընթացքի վերաբերյալ տեղեկացնել հանձնաժողովին առաջիկա նիստերի ընթացքում:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**
/17.06.2015թ./